ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 9, 1957 Общественные науки

Ա. Սրապյան

ՊԼՈՒԶ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑՈՒ ՄԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

13-րդ դարը հայ գրականությանն է տվել մի խումբ անվանի բանաստեղծներ, որոնցից ժամանակով առաջինն է իր դարի ամենափայլուն դեմքերից մեկը՝ հայանի մատենագիր, գիտնական և հասարակական-քաղաքական գործիչ Հովհաննես Երզնկացին՝ Պլուզը: Նրա անունով մեզ հասել են մեծ թվով չափածո ստեղծագործություններ, որոնցից առանձին ուշադրության են արժանի իմաստասիրական, խոհա-իրատական քերթվածները և որոնց մի մասն առ այսօր մնում է անտիպ: Դրանց հիմնական նպատակներից մեկն է ուղղել մարդու և հասարակության մեջ եղած արատները, ուսուցանել, կրթել սերունդը, բարձրացնել հասարակության կուլտուրական, բարոյական մակարդակը, զարգացնել միտքը: Այդ բանաստեղծությունները ոչ թե հեղինակի անմիջական տպավորություններն են, այլ բնական և հասարակական երևույթների խորը ճանաչողությունից, ուսումնասիրությունից ծագած մտքեր, դատողություններ, խոհեր: Դրանք դրսևորում են ոչ միայն մարդու ներաշխարհը՝ նրա հույզերը, խոհերն ու մտորումները, այլև հասարակական-քաղաքական կյանքի, սոցիալ-տնտեսական հարաբերությունների մի շարք ուշագրավ կողմեր: Այս առումով առանձնապես հետաքրքիր է «Յոհաննու մեծի մականուն Պլուզ. ասացեալ ի խնդրոյ Յակոբայ Մանկաւազի Եզընգեցոյ» բանաստեղծությունը[2], որը առնչվում է իր ժամանակի համար մեծ հետաքրքրություն ներկայացնող մի կարևոր պատմական իրողության հետ:

1280 թ. Երզնկայում կազմակերպվում է «Ճեղրայրություն», որի համար կանոններ է գրել Հովհաննես Երզնկացին. «Սահման և կանոնք միաբանութեան եղբարց, որք առաւուծային սիրովն միաբանեցան յեղբայրութիւն միմեանց ի մայրաքաղաքս մեծ յԵզնկայս ի թուականին ՉԻԹ: Ասա հանդիպելով և ծերունի վարդապետն Գրիգոր Սանահնեցի, որ և գրեցաւ ի գլուխ եղբայրութեանս և ես նուաստ վարդապետ Յովհաննես Եզնկեցի գրեցի զսահման և զիրատ եղբայրութեանս...»[3]:

Թե ի՞նչ է իրենից ներկայացնում այդ կազմակերպությունը, մանրամասն զտնում ենք պատմաբան Լ. Խաչիկյանի ուսումնասիրության մեջ[4]: Հիմնվելով Երզնկացու հիշյալ աշխատության վրա, որտեղ շարադրված են «Ճեղրայրության» կազմակերպման նպատակներն ու ներքին կանոնները, Խաչիկյանն հանգում է այն եզրակացությանը, թե Երզնկայի այդ «Ճեղրայրությունը» քա-

---

[1] *Երզնկացու բանաստեղծություններն ընդհանրապես ի մի բերած և հրատարակված չեն:*

[2] *Բանաստեղծությունը պահպանված է Երևանի Մատենադարանի երեք ձեռագրում՝ №№ 2079 (1553), էջ 801, 3595 (ԺԵ—ԺԶ), էջ 93բ, 7708 (ԺԷ), էջ 48ա:*

[3] *Ձեռ. № 2329 (1291), էջ 287բ:*

[4] *Լ. Խաչիկյան, 1280 թվականին Երզնկայում կազմակերպված եղբայրություն, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1951, № 12, էջ 73:*

դաքային աշխատավորական շերտերի՝ առևտրականների ու արհեստավորների մի կազմակերպություն է։

Երզնկացու աշխատությունից՝ «Մահմանք»-ից պարզվում է, որ «Եղբայրության» մեջ համախմբված «երիտասարդ և ազատահասակ մանկունք»-ը պարտավոր էին միասնական ուժերով պայքարել ընդդեմ թշնամու, օգնել միմյանց ազգատության, հիվանդության, մահվան դեպքերում, հյուրընկալել օտարներին, կատարել իրենց անձնական վարքի հետ կապված շատ կանոններ և այլն։ Ահա դրանցից մի քանիսը.

«Յամենայն աւր երեք անգամ յաղաւթս կացէք, ի լուսանալ աւուրն և ի ժամ ուտելոյ և երիկոնն ի ժամ քնոյն. յամէն ժամ ասանելիս ծունր այր մարդն և քան կին մարդն և որ այլ աւելի կարէ...»։

«Շարաթն աւրն և կիրակեն անպատճառ յեկեղեցին երթայցէք...»։

«Եւ եթէ ոք ի փորձութիւն մեղաց անկեալ ի ձեռս սատանայի մատնեսցի, ամենայն եղբարքն ազաւթիւք և բարի խրատով և ողոքանաւք այլն սատաւիք և ամենայն հնարիւք ազատեսցեն զանգեալն ի ծառայութիւն մեղաց...»։

«Եւ եթէ ոք յաղքատութիւն անկցի և ի չքաւորութիւն մարմնոյ, այլ եղբարքն բան կարողութեան և բան ուժոյ աւգնեսցեն և ազքատ եղբաւրն աւգնելոյ...»։

«Եւ եթէ ոք ի սկարութիւն և ի ցաւ հիւանդութեան մարմնոյ անկցի, յամենայն աւր յեղբայրութենէն ի սեռութիւն գնասցեն և զհիւանդացեալն մխիթարեսցեն...»։

«... որ և այլոց բարի արասցեն, որ գան ի հեռաւոր աշխարհաց... ասպրնջական և հանկուցիչ լիցին...»[1]։

Քննության ենթարկելով «Յոհաննու մեծի մականուն Պոլուզ. ասացեալ ի խնդրոյ Յակորայ Մանկտաւագի Եզընգեցոյ» բանաստեղծությունը (որ գրված է շուրջ 1290 թվականին, կենդանի, խոսակցական լեզվով՝ միջին հայերենով, զվարճախառն և սրամիտ ոճով), այնտեղ գտնում ենք «Մահմանք»-ում շարադրված համարյա բոլոր կանոնները։ Բանաստեղծությունը կատարված է այնպես, որ հնարավորություն է տալիս պարզել քաղաքային առևտրա-արհեստավորական շերտերի, մասնավորապես մանկտինների ու նրանց ավագների կենցաղի, վարքի ու գաղափարախոսության որոշ կողմեր։

Նախ պարզենք, թե ի՞նչ է նշանակում մանկտավագ և թե ո՞վ էր Հակոբ Մանկտավագը, որի խնդիրքով Հովհաննես Երզնկացին գրել է իր բանաստեղծությունը։

Մանկտի բառը հայերենում գործածվել է բազմաթիվ և տարբեր իմաստներով՝ տղա, պատանի, երիտասարդ, ջառել արհեստավոր, զինվոր և այլն։ Բայց այդմ էլ մանկտավագը կարող էր նշանակել մի խումբ երիտասարդների՝ մանկտինների ավագ կամ ղեկավար։ Սակայն մանկտավագ բառը մեր մատենագրության մեջ օգտագործվել է նաև բաց զորական, կտրին, բրավոր, նմանապես և ուսուցիչ կամ վարժապետ իմաստներով[2]։ Ուրեմն Հակոբը երիտասարդ-

[1] Ձեռ. Ա. 2329, էջ 291բ—293բ։

[2] Մանկտավագ բառի այս իմաստները նշվում են՝ Առձեռն բառարան հայկազեան լեզուի, 1865, էջ 539. Հ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 552 և Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Գ, էջ 203։

ներից բաղկացած, գուցե և իրոք սպառազինված, ինչ որ մի խմբի ավագն էր։ Թե ի՞նչ գործով զբաղվող երիտասարդների՝ մանկտիների ավագ էր նա, պարզվում է հետևյալից.

Դիմելով Հակոբ Մանկտավագին, Երզնկացին նրան մեղադրում է իր պարտավորությունները չկատարելու մեջ և հորդորում զարթնել «ի քնոյ», թողնել ինչ որ գործել է չար և այնուհետև ուղիղ ճանապարհով ընթանալ։ Ապա հենց ինքը՝ Հակոբը մեկ առ մեկ թվում է իր մեղքերը և ամենի համար առանձին-առանձին ներում հայցում.

Ծերաց մարմնոյս է իմ խաւար,
Աչքն հոգոյս զարձեալ է չար,
Տեսն աղբատաց ինձ դայ գրժար,
Զարթո՛յ դիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց։

Պաղոց պահող չեմ, այլ կերող,
Որրոց, այրեաց եմ ես զրրկող,
Ընդ խնդացողս եմ ես լացող,
Զարթո՛յ դիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց։

Աղորմութեան չեմ լեալ զղոյշ,
Ոչ եմ արկել ես փող ի դուշ,
Ոչ եմ քաղել զմեղացն փուշ.
Զարթո՛յ դիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց։

. . . . . .

Հիւրոց չեմ լեալ ասպնջական,
Ոչ եմ տուեալ տեղի յիմ տան,
Ոչ աղքատաց ածել սեղան,
Զարթո՛յ դիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց։

Աղօթից ծոյլ եմ, չեմ ըստէպ,
Ժամատեղեաց չեմ լեալ հանդէպ,
Վաղն զժողքն է ինձ ի դէպ,
Զարթո՛յ դիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց։

Քաղցելոց չեմ լցեալ ապուր,
Ոչ արբուցել ծարաւեաց ջուր,
Ոչ ընկալեալ յիմ տանն հիւր,
Զարթո՛յ դիս, տէ՛ր ի քնոյ մեղաց։

Մերկոց հանդերձ չեմ հագուցել,
Ոչ հիւանդաց տես դնացել.
Ոչ բանտարգել մխիթարել.
Զարթո՛յ դիս, տէ՛ր, ի քնոյ մեղաց[1]։

Բաղդատելով «Մամմանքիթ»-ի վերևում բերված հատվածը և բանաստեղծության այս տողերը իրար հետ, տեսնում ենք, որ Հակոբ Մանկտավագը պարտավոր է եղել առաջնորդվել այն սկզբունքներով, որով ղեկավարվել են և «Ընդարձակությանց» անդամները։ Սա հիմք է տալիս եզրակացնելու, թե նա նույն «Ընդարձակությանց» անդամներից էր։ Եվ քանի որ Երզնկայի «Ընդարձակությունքն» միավորում էր քաղաքի երիտասարդ արհեստավորներին ու առևտրականներին, անտարակուսելի է դառնում, որ Հակոբ Մանկտավագը ևս նրանցից մեկն էր, սակայն ավագներից։

Բանաստեղծությանն այդ տողերը ցույց են տալիս նաև, որ Հակոբ Մանկտավագը, որքան էլ չափազանցված լինեն նրա մեղքերը, չի կատարել իր պարտավորությունները, չի հետևել «Ընդարձակության» կանոններին. ավելին, նա հակառակն է գործել՝ զրկել է որբերին ու այրիներին, խուսափել է աղքատներից, ասպնջական չի եղել օտարներին, պահք չի պահել, եկեղեցի չի գնացել, այլև կեր ու խումով, զվարճություններով է անցկացրել իր ժամանակը.

Մընաս ի մէջ մեղացդ ի քուն,
Թմրիս երկայն դիշերն ի բուն,
Զդիտես դյաղուրդ որպէս ըզշուն,
Յակոբ, զարթի՛ր ի քնոյ մեղաց (էջ 801)

ասում է նրա մասին Հովհաննես Երզնկացին։

---

1 Ձեռ. № 2079, էջ 802։

Հարկավ, միայն Հակոբ Մանկտավագը չէ, որ չի հետևել «Սահմանք»-ի բարոյական սկզբունքներին, այլ նրա հետ եղել են և ուրիշները։

Անհավանական չի լինի այդ «ուրիշների» մեջ նկատել նաև Հովհաննես Երզնկացու հաջորդներից մեկի՝ 13—14-րդ դարի հռչակավոր տաղերգու Կոստանդին Երզնկացու մի բանաստեղծության մեջ հիշվող եղբայրներին[1], որոնք սիրել են կյանքի վայելքները և հատկապես խնդրել իրենց համար աշխարհի ու սիրո բաներ գրել.

Եղբարք մի կան հետ մեզ սիրով,
Աշխարհի բան ուզեն գրով.
Նայ ես ասեն այն յայտնի ձայնով
Սիրու բաներս ասցի յոլով։[2]

Եղբայրների կյանքին ու կենցաղավարությանը վերաբերող այս տեղեկությունները հնարավորություն են ընձեռում որոշ եզրակացությունների հանգել նաև նրանց գաղափարախոսության մասին։

Այն հանգամանքը, որ Հակոբ Մանկտավագը, ինչպես և «Եղբայրության» մյուս անդամները առաջնությունը տալով աշխարհային, մարմնական վայելքներին և ոչ հանդերձյալին, չեն կատարել հոգու պահանջները, ավետարանական խրատները, ցույց է տալիս, որ նրանք ոչ միայն թերացել են հավատի հարցերում, այլև հակադրվել են եկեղեցու իդեոլոգիական սկզբունքներին և ստեղծել են իրենց գաղափարական հասկացությունները։

XIV—XV դարի պատմիչ Մխիթար Ապարանեցու մոտ հանդիպում ենք Հակոբ Մանկտավագին վերաբերող մի շատ հետաքրքիր հիշատակության, որը ոչ միայն չի ժխտում այդ եզրակացության հավանականությունը, այլև հաստատուն հիմք է տալիս դրան։ X—XV դարերի հայ աղանդավորների մասին խոսելիս նա գրում է.

«Իսկ հայերն, որ կոչին Գորգեցիք. ասեն, որպէս Նոյանցն ելեալ ի յումեմեն Նէ, եթէ Քրիստոս է Հայր և Որդի և Հոգի Սուրբ. և ըստ այնպիսեացն յիմարութեանցն համարեալ լինի՝ եթե Սուրբ Երրորդութիւնն չարչարեցաւ և մեռաւ։ Վասն այնորիկ և բազումք ի հայոց ուրացան զԵրրորդութիւն անձանցն, որպէս զՄարել, և ասէին վասն Քրիստոսի, եթէ ինքն է Հայր, ինքն է Որդի և ինքն Հոգին Սուրբ. և յայնմ չար աւանդութեանց բազումք սովորեալ այնպէս ասէին. որպէս և հանապազորդ յաղօթսն իւր ասէր Յակոբ Մանկտաւագն»[3]։

Փաքր ինչ հետո Ապարանեցին խոսում է նաև Երզնկայում եղած ուրիշ աղանդավորների մասին ընդհանրապես։

Եթե ճշմարիտ է, որ Մխիթար Ապարանեցու հիշատակած Յակոբ Մանկտավագը և Երզնկացու բանաստեղծության պատվիրատուն նույն անձնավորությունն են, իսկ դա հավանական է, և Հակոբ Երզնկացի Մանկտավագը աղանդավոր է, ապա կարելի է եզրակացնել, թե ոչ միայն նա, այլ Երզնկայի

---

[1] Այս մասին տե՛ս Լ. Խաչիկյան, 1280 թ. Երզնկայում կազմակերպված եղբայրությունը, էջ 84։

[2] Մ. Պոտուրյան, Կոստանդին Երզնկացի և իւր քերթուածները, Վենետիկ, 1903, էջ 171։

[3] Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 552։

«Եղբայրության» ուրիշ անդամներ ևս, որոնց հետ կապ է ունեցել Հակոբը, հարել են հերձվածողական, աղանդավորական շարժումներին։

Երզնկայից բացի մանկտավագներ են հիշվել նաև Վանում, Կաֆայում, Սուլթանիայում և այլուր[1]։ Արդյոք այս չի նշանակում, թե այդ ուրիշ վաճառաշահ քաղաքներում նույնպես գոյություն են ունեցել եթե ոչ Երզնկայի «Եղբայրության» տիպի կանոնավոր կազմակերպություններ, ապա առևտրա-արհեստավորական որոշ միավորումներ, որոնց անդամներից կամ ղեկավարներից են եղել այդ մանկտավագները։

«Յոհաննու մեծի մականուն Պըլուդ. ասացեալ ի խնդրոյ Յակոբայ Մանկտաւագի Եզընգեցոյ» բանաստեղծությունը հիմք է տալիս մի վերջին եզրակացության ևս։

Հովհաննես Երզնկացին ոչ միայն գրել է Երզնկայի «Եղբայրության» «Մահմանք»-ը, այլև շարունակաբար հետաքրքրվել է այդ եղբայրների վարք ու բարքով և հետագայում ևս, մոտավորապես XIII դարի 90-ական թվականներին, նոր խրատականներ է գրել նրանց համար[2]։

---

1 Լ. Խաչիկյան, 1280 թ. Երզնկայում կազմակերպված եղբայրությունը, էջ 78—79.

2 Տե՛ս նաև «Ազամայ որդիք ամէն ու ծնունդ ի հողէն» բանաստեղծությունը. ձեռ. № 8029 (1376), էջ 236ա։